

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ի 19 մայիսի 1843 ամի.

ի Վազան:

Պատուական Հօր Եփրեմայ ՚ի Ս. Նազարեանց

Ողջոյն շատ:

Կարծել ձեզ մի լիցի՝ եթէ մոռացեալ ինչ իցեմդբա-
րեկամդ իմ ազնուական. ոչ և ոչ բնաւ. այլ արկածք չալ,
մի զմիով եկեալ հասեալ ի վերայ մեր, ոչինչ ընդհատ և
բազմադէմ գործք պաշտամանս խափանարկու ինձ եղեն ցայ-
սօր՝ նամականու առ ձեզ լինել: Եթէ այսու մեղուցեալ ինչ
իցեմ առ ձեզ, յանուն մերոյ սուրբ բարեկամութեան, վեհ-
անձն թողութիւն յինէն աղաչիք: Զյառաջագիմութեանց ի-
մոց ՚ի վարդապետականս ասպարիզի և զպատանեաց ինձ ա-
շակերտելոց, շատ լիցի այսչափ ինչ տեղեակ առնել զՀարա-
զատդ. եւ իմ արդէն երկու ուսանողք Ռուս աղգաւ ՚ի հա-
մալսարանիս, (առ որ յաւելցի՝ որպէս կարծեմ և Հայազն
մի Աւագեան անուն) և երկու մանկունք յառաջին ճեմա-
րանի Ղազանու. առաջինքն ընթեռնուն և գրեն. ունին ու-
սեալ արդէն զառաջին մասն բերականութեան հայոց ըստ
աշխատասիրելոյն առ յինէն նոր ոճիւ և եղանակաւ. իսկ
յետինք կարդան և գրեն ըստ բաւականին: Յաւ է՝ զի պա-
կասութիւն յարմար մատենից վասն նորընծայ ուսանողաց
լեզուիս առ ժամս համարացունէ յոյժ զյառաջատուու-
թիւնս մեր Տնօրէնութեամբ հոգաբարձուի համալսարանիս
Տեառն Մուսսիւ-Պուշկինայ և խնամարկութեամբ իմով ըս-
տացեալ է մեր արդէն զոմանս մատենան Հայոց՝ տպեալս
ի Վենետիկ միջնորդաւ հօր Մինասայ առաջնորդ ի Ղրիմ
վարդապետի պապակրօն. և յուսամբ ստանալ առաւել ևս,
մինչ առաքեսցի և միւս կէս դրամոցն՝ առ այս վախճան սահ-
մանելոց ի տնտեսութենէ համալսարանիս. ընդ ամէնն գոր-
ծէ 410 ռուբլիս թղդագրամ. որոց որպէս յայտ է՝ զկարե-
ւորս միայն ի ձեռս բերել մ'ըթ է:

Այժմ սակաւ մի զառտնին իմոց պարագայից: Եթեմնե-
կաւ յետոյ բան զմուտս իմ ի Վազան, հրձիգ եղեալ բա-

ղաքիս սպառնեցաւ գրեթէ ըստ մեծի մասին: մըրիկ սաստիկ յարուցեալ յաւուր անդ հրդեհին, փոքր մի ևս, և էր զՎազան ամենայն յաճին փոխարկեալ:

Եւ մեզ նորեկ օտարականացս հասին վիշտք բազումք, իբր զի երկիցս հարկադրեալ գտաք շտապ տագնապաւ հանել զանձինս և զկարասիս մեր ի դաշտ, բացօթեայ գիշերելով միանգամ ի ներքոյ խոնաւ ցրտոյ և անընդհատ անձրևոյ յորոց Ցէր զձեզ ազատեսցէ:

Յառաջին բնակութեան մերում կացեալ ամիսս երիս, առ վայրենաբարոյ գնացից տանուտեառն մերոյ հարկեցաք ի բաց ելանել և խնդրել մեզ այն օթեան, բայց ոչ գտեալ առ ձեռն պատրաստ տուն բնակութեան մերոց պիտոյից ըստ իմք յանկաւորեալ, բնակեաք առ վայր մի ի հիւրանոցի Զինչ. և յայսմ անվաանդ կարծեցեալ բնակութեան որոնեալ եգիտ զմեզ հրդեհն անագորոյն. տես զվատաբաղդութիւն մեր. յ8 ժամու երեկոյին լինի շշնջիւն ի հիւրանոցին և վազվազել ծառայից ի մէջ սենեկաց. և ահա լսեմք զբարբառն՝ որ ասէ՝ հրդեհ, հրդեհ առ մեզ. այդ թուլացեալ թալկացան ոտք մեր և ձեռք. բայց կին իմ զգեցեալ յանձն զայրիական իմ քաջութիւն՝ ել առ դուրս և կոչեաց զարս երկուս յօգնութիւն տառապելոցս: Երագեցաք փրկել, զոր մարմն էր փրկել. խաւար ձմեռնային երեկոյի յանհարկնս բազմացուցանէր զխռովութիւն իբր դիւահարեալ փախտականացս, վասնզի կարասիք զանազան արանց արտաքսածեալ, ոչ ոք գիտէր թէ ո՞ր ինչ իւր իցէ և ո՞ր ինչ օտարին. այլ փառք և պատիւ Ամենակալին. զգլխաւորսն յիրաց մերոց զերծուցեալ ի ժանեաց անագորոյն հրոյն, բարձաք ի սալ թաթարի ուրում և խոյս տուաք անտի. իսկ ես կիսամերկ և բռնաւորեալ վայր ի վերոյ հանդերձեղինօք: Եւ առ այս անգամ ողջանդամ պահեալ յերեսաց վտանգին չուեցաք՝ ուր չուեցաք: Չանձրանամ և զանգիտեմ, զի մի գուցէ տաղտուկ ի լսելիս ձեր արկից պատմելով միշտամիտջէ զոր կրեցաքս ցարդ և կրեմք տակալին. ահաւասիկ է Կազան և փառք նորա, յոր զմեզ անպարտ դատապարտեաց մեր բաղդ նախանձու: Լսեմք յակնաւորեաց՝ թէ ի փոքրիկ հրդեհի՝ եղելոյ յաւուրս յայտոսիկ, քսան ամեայ առաւ ոմն՝ որ ննջէր ի տան ոչ կարացեալ յայրիւն առ դուրս վազել:

խորովեալ յաճին մաշեցաւ. իսկ այլք զերծեալք՝ բայց վիրաւորք տուեալ եղեն յանկեւանոց համալսարանին: Եղաք և մեր ի հրօյրեացս անդ, բայց պակասեաց մեզ սիրտ տեսանելոյ զաճինացեալ ոսկերս վատաբախտին: Կեցութիւն մեր ի Կաղան վատթար յղԺ. բնակութիւնք զկնի հրդեհին թանգ անպատում, թէ և նախ քան զայն ոչինչ կարի թեթեւագին: Ուրախութիւն չիք մեր և ոչ մի, այլ տառապանք բազումք: Ահա՛ ձեզ համառօտ նկարագիր մերոյն վիճակի յաւերակս Կաղանու:

Ի մէջ այսպիսի պարագայից աշխատել անվրդով հոգւով գործ է ապաքէն: Եւ այսպէս աշխատասիրեալ է իմ արդէն համառօտ պատմութիւն անցից եղելոց ի բնաւս ի բնկզբանէ մինչև ցաւուրս մեր ի հայ լեզու և բովանդակեալ ի 16 թերթս (թաքախս): Ի տարակուսանս եմ՝ թէ ի՞նչ մարթացայց ի լոյս զնա ածել. այո՛ գրեցի զայսմանէ առ պատուական Խաչիկն մեր՝ որոյ լրջմտեալ պԺժ, հաւանեալ է ընտրել զիս անդամ խորհրդեան արևելեան ճեմարանի իւրոյ ի մոսկով. ո՛ւր էր՝ եթէ պատուական տեսարքս այսոքիկ առեալ զիս աստի, տային ինձ միջոցս աշխատել առ Հայս և վասն Հայոց:

Առ յապայս բազում ևս գրեցից առ Ձեզ.

Մատուցեալ Ձեզ ողջոյն ի դիմաց տառապեալ իմոյ ամուսնոյ

Նմ և եղեց

Ձեր

Հարազատ Ս. Նազարեանց:

Զհասցէն իմ կարէք ստանալ

ի Պարոնայ Դիլանեան:

